ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

   Աննա Չուլյան, տնօրեն

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Իտալիա, Հռոմ, մարտի 22-ից 24-ը ներառյալ

3. **Հրավիրող կողմը.**

   EBSCO Information Services (ԱՄՆ)

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Ազգային գրադարանների ֆորումը համախմբեց ոլորտի առաջատար մասնագետներին՝ քննարկելու գրադարանների զարգացման ռազմավարական ուղղությունները:

5. **Քննարկված թեմաները.**

   Քննարկումների առանցքում էին թվային փոխակերպումը, բաց տեխնոլոգիաները, մետատվյալների զարգացումը և օգտվողակենտրոն ծառայությունները:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   - **Բաց ենթակառուցվածքներ (Open Source)**
     դառնում են ազգային գրադարանների զարգացման կարևոր ուղղություն՝ ապահովելով ճկունություն և անկախություն:
   - **Մետատվյալների ռազմավարական նշանակություն**
     որակյալ և բաց մետատվյալները կարևոր են միջազգային տեսանելիության և ինտեգրման համար:
   - **Թվային փոխակերպում**
     պահանջում է ոչ միայն տեխնոլոգիական, այլև կառավարչական և կազմակերպչական փոփոխություններ:
   - **Օգտվողի փորձառություն (UX)**
     հանդիսանում է ժամանակակից գրադարանային ծառայությունների առանցքային գործոն:

- **Միջազգային համագործակցություն**
  անհրաժեշտ է համատեղ լուծումներ մշակելու և գլոբալ հարթակներում ներկայություն ապահովելու համար:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ընթացքում քննարկվել են գրադարանային համակարգերի արդիականացմանն ու միջազգային համագործակցության խորացմանն ուղղված հարցեր, մասնավորապես.

Մասնավորապես՝

- FOLIO բաց կոդով գրադարանային համակարգ՝ որպես ժամանակակից և համայնքահեն լուծում
- Բաց մետատվյալների զարգացում և մասնակցություն միջազգային մատենագիտական համակարգերին
- Բաց ծրագրային ապահովման կիրառություն ազգային գրադարաններում

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

- Բարելավել մետատվյալների որակը՝ միջազգային ստանդարտներին համապատասխան
- Զարգացնել միջազգային համագործակցությունը
- Ներդնել օգտվողակենտրոն թվային լուծումներ
- Կազմակերպել մասնագիտական վերապատրաստումներ

Ֆորումը հաստատեց, որ ազգային գրադարանների ապագան պայմանավորված է բաց տեխնոլոգիաների կիրառմամբ, մետատվյալների զարգացմամբ և միջազգային համագործակցությամբ: Ստացված փորձը կարևոր հիմք է գրադարանի ռազմավարական զարգացման համար՝ գրադարանային ծառայությունների շարունակական արդիականությունն ու արդյունավետությունը ապահովելու համար:

9.

Տնօրեն՝ Աննա Զուլյան

Ստորագրությունը, ամսաթիվը:

26.03.2026